

ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ

ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Սեմիտական լեզուների հետ կապւած բառերի շարքը կարելի է դասել և «ահաւասիկ, ահաւադիկ, ահաւանիկ» մակբայների բաղադրիչ մասը՝ ահա, որի նախատիպը պակասաւոր ձևով (առանց սկզբի ա-ի) մենք տեսնում ենք արաբերէն հրամայական եղանակի ١ (հա) ձևում (բայը պակասաւոր է և խոնարհման մէջ գործածական է այդ եղանակը միայն), որն շանակում է — վերցրու։ Դրանից կազմւում է մի շարք մակբայներ — օր. ١ (հա հունա) — ահա այստեղ, ٢ (հակա) — ահա քեզ, ٣ (հադա) — այս (դերանուն), ٤ (١٥ + ١١ + ١ — հա անադա) — ահա ես։ Վերցրելով ևս պատահում են թէ արաբական «հա» ձևը (ح) և թէ հայկականը — ահա (հ), նոյնիսկ աւելի կրճատը՝ ա (ا)։ Յիշեալ օրինակներից երևում է «ահա»-ի սկզբի «ա» հնչիւնի եկամուտ լինելը։ Եւ իրօք բնորոշիչ են դաւառարարքաւում գործածւող «հա» (փոխ. — ահա-ի) և նոյնիսկ «հը», ինչպէս և «ա» (համեմատել «ակա» — վերցրու [ահա + կա]) ձևերը։ Վերջին օրինակը (ակա) կարելի է ընդունել և պարզ փոխառնութիւն յետադայ ժամանակների բանաւոր ճանապարհով (١٥ — հակա = ահա քեզ)։

•

«Ից» թէ «ին»

Տրական և բացառական հոլովների իրար հետ շփոթելը հազւադէպ երևոյթ չէ մանաւանդ դաւառարարքաւում. այնտեղ, ուր մենք սպասում ենք արական հոլով, հետեցնելով առարկայի մի օր և է առարկային անցնելու փաստից, լսում ենք բացառական, և հակառակը։ Պարզորոշ օրինակ կարող են հանդիսանալ ժամանակի վերաբերեալ գործածւող ձևերը. ասում ենք — օր. «5-ին բանել է 15 րոպէ», դրա հետ միասին և՛ «5-ից բանել է

15 րոպէս: Այս անորոշ երկդիմութիւնը մտել է և գրականութեան մէջ: Արդ, որն է համարիտը:

Պարզ է, որ վճռական նշանակութիւն պիտի ունենայ հարցը որոշելիս տրւած րայ-ստորոգեալը: «Բանել» րայը ոչ ներգործական իմաստով (առանց կրող խնդրի) շունի կրաւորական ձև (չենք ասում «ես քանում եմ»-ի տեղ «իրը քանում է ինձնից»): Արա լրացուցիչը կարող է լինել, հետևապէս ոչ հայցական հոլով, ոչ էլ քացառական, այլ տրական. «ես քանում եմ քեզ համար» քեզ, կամ ժողովրդական ձևով՝ քեզի, նրան, ուրեմն և «15 ր. քանել է 5-ին»: Սակայն կարեւոր է աւելացնել, որ թիւրիմացութեան մէջ չընկնելու համար չպիտի շփոթել համանման «5-ին(ից) քան է արել 15 ր.» ձևի հետ, ուր երբ ստորոգեալ է հանդիսանում ոչ թէ քանել է այլ՝ «անել»-ը «քանել»-ից առաջացած «քան» սեռի խնդրով (հայց. հոլով): Այս դէպքում արդէն կառավարող րայը իբրև ներգործական սեռի կարող է ունենալ և քացառական հոլով, ինչպէս և տեւանում ենք պարսկերէն կամ ռուսերէն լեզուներում: Արանցից առաջինում գործ է ածւում «5-ից քան է արել 15 ր.» ձևը քառացի կերպով (էդ փէանջ դէ դեդիջէ քար կերդէ էստ — از پنج د دقيقه کارکرد اس کردن (քերդէն) րայը ներգործական իմաստ ունի և նշանակում է շինել, գործել^{*}): Ուրեմն այստեղ քացառւում է «5 (կամ 5-րդ) ամբողջական մեծութիւնից գործւել, շինւել է 15 րոպէ» ձևով, ինչպէս և ռուսերէնում (15 минутъ пятого — 15 м. дѣлалось, работалъ (но) из (от) пятого). Եւրոպական լեզուներից ֆրանսերէնը ունի ուրոյն ձև — «մամը 4-ն է և 15 րոպէ (il est quatre heures dix minutes):

• • •

Համեմատական լեզւագիտութիւնը յաճախ երևան է հանում այնպիսի զարմացք յարուցանող երևոյթներ, որոնք հէնց այդ իրենց տարօրինակութեամբ ապացոյց կարող են հանդիսանալ քաղմութիւ առեղծւածային հանգոյցների լուծման հաւակնութեան: Շատերին յայտնի է մեր արդի լրագրական հրապարակախօսութեան մէջ մեծ քաղաքացիութիւն ստացած, հասարակական այլաձև գործիչների յոյժ սիրելի գործ ածած «թայֆայական» մակդիրը: «Թայֆա» արարերէն բառ է (طائف րոգն. թաւայիֆ — طواف, տաֆա — طاف րայից) և նշանակում է դաս, դասակարգ (հասարակա-

^{*}) Համեմատել հայերէն — Տիգրանակերտ, Մանավադակերտ և այլն յատուկ անունների հետ. ուր «կերտ»-ը (= քերդ — کرد) քերդէն-ի բունն է:

կան), համայնք (կրօնական), Հետևաբար այդ արարական գոյականից կազմւած հայկական ածականը՝ թայֆայական արտայայտում է մի լուրջ դադափար՝ դասակարգային. համայնքային: Սակայն, որքան եւ հետևում եմ մեր լրագրութեանը, այդ բառը շատ քիչ է այժմ մօտենում իր իսկական նախկին նշանակութեան և այդ ածականով այժմ (ան)պատւում են ոչ թէ մի որոշ դասակարգի շահեր պաշտպանող անձնավորութեան, որ ինքնին ոչ մի պարսաւելի բան չէ, այլ՝ մօտաւորապէս «խառնակիչ, դժուծ, ստոր, հասկան, նեղ կուսակցական» կամ այդպէս ենթադրող մարդկանց, ինքնին խոշոր սխալ է:

Նոյնպէս և հէնց միայն մի մարդու ստեղծած, կամ սխալ հասկացած բառը հեշտութեամբ տարածւում է նոյն սխալ ձևով: Մուհամմադը իր կուրանում գործ է ածում «միլլ է» (مِلْلَ) միլլ լաթ բառը «կրօն, համայնք, դաւանանք» իմաստով, մինչդեռ ասորերէնում, որտեղից դա փոխ է առնւել, նշանակում է «բառ» (բան): Այդպէս և մի մարդու սխալը փոխարինարար տարածւելով, ընդհանրանում է հարիւր միլիոնավոր այլալեզու ազգերի մէջ:

Եւ միթէ այս փոքրիկ փաստերը ապացոյց չեն մեր արդի խօսակցական լեզուի և գրարարի բազմաթիւ դեֆեկտների դիւրին մեկուսացման: Ակնյայտնի պարզութեամբ է շնչում և մի երևոյթ կապւած մեր լեզուի շեշտի օրէնքի հետ: Պարսկական «սուգ» (سُغ), «օր» բառից կազմւում է «սուզի» (سُزِ) ձևը, որ նշանակում է «օրւայ պարէն, ապրուստ»: Այստեղից է առաջացել գրարար «սոճիկ»-ը, որ արդի աշխարհարարում յաճախ արտասանւում է «սոճիկ»: Ինչպէս և պարզ է, տարբերութիւնը կայանում է միայն մի հասարակ շեշտի մէջ. սակայն որքան խոշոր նշանակութիւն ունի այդ «փոքրիկ» շեշտը: Պարսկերէնում միատեսակ գրւող «սոճիկ» և «սուզի» բառերից առաջինը նշանակւում է «մի անգամ, մի օր» (=ОДНУЖДЬ). մինչդեռ քուզի — սոճիկ, օրային, (օրւայ պաշար). բառը սխալ (և հակասակ մօքի) արտասանութեամբ մտել է թուրքական լեզուների մէջ, այնտեղից էլ մեր դաւառարարբառները «սոճիկ» ձևով (օրւայ պաշար): Նոյն էլ մեր գաւառարարբառները «սոճիկ» ձևով (օրւայ պաշար): Նոյն էլ մեր գրական աշխարհարարը համաձայն իր՝ թուրքաց լեզուներից մեծ չափով կախման երևոյթին, ձևակերպել է գրարար «սոճիկ»-ը «սոճիկ»-ի:

* * *

Հետաքրքրական երևոյթ է ներկայացնում և գրարարից աշխարհարար անցնող տատնանքների առանձնայատկութիւնը, մա-

*) Ըստ պրօֆ. Ա. Կրիմսկու:

նաւանդ դերանւանց հորովման շրջանում: Փրարարում ցուցական
 «աա, դա, նա» (ըստ Ն. Մատի առաջացած սաւ, դաւ, նաւ նախ-
 նական ենթադրական ձևերից) դերանունները հայցական հոր-
 վում նման են ուղղականին թէ շնչաւոր և թէ առհասարակ
 բոլոր առարկաների վերաբերեալ. միայն ստանում են որոշիչ «զ»
 նախդիրը, օր. «կիզուցից զդա» (կայրեմ այդ [փայտը, տունը]),
 և «հարկանեմ զդա» (ձեռում եմ դրան [մարդուն, ձիուն]):

Մինչդեռ գրական աշխարհարարը խորապէս ազդուելով ուս-
 սերէնից, ստացել է անշունչ և շնչաւոր առարկաների տարբերու-
 թեան սխտեմ. վերջիններս հայցականում նմանւում են տրակա-
 նին (ևս սպանեցի դրան [մարդուն]), իսկ անշունչ առարկաների
 հայցականը նոյնն է ուղղականի հետ (ևս դա [այդ] կտորեցի): Աստիճանական
 անկեցման երրորդ աստիճանի վրայ են մեր գա-
 ւառարարքաւորները, գտնէ մի մասը: Նման թուրքական լեզուե-
 րին, որոնց հայցականը ուրոյն ձև ունի և ընդհանուր բոլոր կարգի
 առարկաների համար (օր. բունու գեօրդում بونی کور کو—տեսայ դ-
 րան [մարդուն], بادی بادی—եղբւմ բունու—կերայ այս [հացը]), Գան-
 ձակի գաւառում գործ են ածում նոյն ձևով միատեսակ (տրակա-
 նի) վերջաւորութեամբ հայցական հորով, օր. «եա դրա (տեսական
 հորով գրարարում—տրական աշխարհարարում առանց դիմորոշ
 յօդի—փոխանակ—դրան) ուտիլ շեմ» (հացին, մսին, փոխ. հացը,
 միսը), ինչպէս և «եա» դրա (դրան) սպանեցին: Այս դէպքում
 գաւառարարքաւոր կարելի է դուգորդել պարակերէնի հետ, որը
 հայցականի համար ունենալով յատուկ որոշիչ վերջաւորութիւն
 [րա—],—օր. ուրա դիդէմ—بادی دای=տեսայ նրան (տուն կամ
 մարդուն)], յաճախ, մանաւանդ գրական լեզւում, տրականն ըն-
 դունում է հայցականի վերջաւորութիւնը:

Է ս գ է ր

